



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

27 փետրվարի 2023 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝

Վ. Գրիգորյանի

Անդամակցությամբ՝

Ա. Թունյանի

Ե. Խունդկարյանի

Քննության առնելով «Հայկ Արշին» ՍՊԸ-ի անհատական դիմումի  
ընդունելիության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Հայկ Արշին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Դիմող, ներկայացուցիչ՝ փաստաբան Լուսինե Խաչիկի Գրիգորյան) դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2023 թվականի փետրվարի 7-ին)՝ խնդրելով.

«Հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 28-րդ և 69-րդ հոդվածները և հաշվի առնելով Սահմանադրության 1-ին, 3-րդ, 75-րդ և 80-րդ հոդվածների

պահանջները՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 751-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 59-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին, 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր այնքանով, որքանով չի նախատեսում պայման, այն մասին, որ կապալառուի կողմից աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնված է համարվում նաև աշխատանքի արդյունքը Պատվիրատուի փաստացի տիրապեմանն անցնելու պահից»:

2. Դիմողը հայտնել է, որ որոշակի օբյեկտի կառուցման նպատակով կնքվել է շինարարական կապալի պայմանագիր, իսկ հետագայում այդ պայմանագրով կապալառուի և իր միջև կնքվել է պահանջի զիջման պայմանագիր, որով շինարարական կապալի պայմանագրով կապալառուի իրավունքները փոխանցվել են Դիմողին: Շինարարական կապալի պայմանագրի շրջանակներում կողմերի միջև չի կազմվել հանձնման-ընդունման ակտ, սակայն կապալառուի կողմից գույքը փաստացի հանձնվել է պատվիրատուին, որպիսի փաստը վերջինս ընդունել է:

Դիմողը նշել է, որ շինարարական կապալի պայմանագրից բխող՝ հետավարտման երաշխիքի գումարի, ինչպես նաև պարտավորությունների խախտման հետևանքով պատճառված վնասի և գոյացած տույժերի գումարի բռնագանձման պահանջի մասին հայց է ներկայացրել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, որը 2021 թվականի դեկտեմբերի 2-ի վճռով բավարարվել է մասնակի (թիվ ԱՐԴ1/2780/02/18 քաղաքացիական գործ): Գործով կայացված վճռի դեմ պատասխանողը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2022 թվականի մարտի 18-ի որոշմամբ բավարարվել է, իսկ այդ որոշման դեմ Դիմողի ներկայացրած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է Վճռաբեկ դատարանի 2022 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ:

Ըստ Դիմողի՝ հիշյալ գործով վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշմամբ իր նկատմամբ կիրառվել է Քաղաքացիական օրենսգրքի 751-րդ հոդվածի 4-րդ մասը, որում առկա է Սահմանադրությանը հակասող օրենսդրական բաց, ինչը հանգեցրել է Դիմողի՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված՝ սեփականության, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և արդար դատաքննության իրավունքների խախտմանը: Դիմողը վիճարկում է Քաղաքացիական օրենսգրքի 751-րդ հոդվածի 4-րդ մասն այն առումով, որ դրանում ամրագրված նորմը չի նախատեսում պայման այն մասին, որ կապալառուի կողմից աշխատանքի արդյունքը պատվիրատուին հանձնված է համարվում նաև այն պատվիրատուի փաստացի տիրապետմանն անցնելու պահից:

Ըստ Դիմողի՝ պրակտիկայում շատ են դեպքերը, երբ կապալառուն պարտավորության պայմաններին, օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան կատարում է աշխատանքը և հանձնում դրա արդյունքը պատվիրատուին: Վերջինս այն զննում և ընդունում է, սակայն դրա մասին չի կազմվում երկկողմ կամ միակողմ հանձման-ընդունման ակտ: Դիմողի համոզմամբ՝ նման դեպքերում կապալառուի՝ կատարված աշխատանքի դիմաց հատուցում ստանալու իրավունքը չպետք է սահմանափակվի, և չի կարող օրենսդրական բացի հետևանքով փաստացի թույլատրվել, որ բարեխիղճ կապալառուները զրկվեն կատարված աշխատանքի դիմաց հատուցում ստանալու իրավունքից միայն այն պատճառաբանությամբ, որ օրենսդիրը կապալի պայմանագրով աշխատանքի արդյունքը փաստացի հանձնված է համարում հանձնման-ընդունման ակտի գոյության դեպքում:

Դիմողը նշում է, որ վիճարկվող դրույթում առկա օրենսդրական բացի և այդ բացով պայմանավորված՝ դատարանի կողմից դրան տրված մեկնաբանության արդյունքում զրկվել է հանձնման-ընդունման ակտի բացակայության պայմաններում շինարարական կապալի պայմանագրով կատարված աշխատանքի արդյունքը պատվիրատուին հանձնելու և այն փաստացի պատվիրատուի տիրապետման տակ գտնվելու հանգամանքի հաստատման վերաբերյալ այլ թույլատրե-

լի ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից, ինչը խախտում է Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իր արդար դատաքննության իրավունքը:

Դիմողը պնդում է, որ վիճարկվող դրույթում առկա օրենսդրական բացի և այդ բացով պայմանավորված՝ դատարանի կողմից դրան տրված մեկնաբանության արդյունքում խախտվում է կապալառուների՝ Սահմանադրության 59-րդ հոդվածով սահմանված տնտեսական, ներառյալ՝ ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու իրավունքը, քանի որ նրանք պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում կատարում են աշխատանքը և հանձնում այն պատվիրատուին, սակայն այն պատճառով, որ պատշաճ կատարած աշխատանքի արդյունքն առանց հանձնման-ընդունման ակտի է հանձնվել, փաստացի զրկվում են շահույթ ստանալու իրավունքից:

Դիմողը գտնում է, որ անկախ համապատասխան փաստաթղթավորման հանգամանքից՝ կապալառուն աշխատանքի արդյունքի դիմաց վճարվելիք գումարի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք: Հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկային՝ Դիմողը նշում է, որ սեփականություն կարող են համարվել նաև որոշ գույքային իրավունքներ և շահեր, ինչպես նաև անվիճելի և կատարման ենթակա պահանջի իրավունքը, և եզրակացնում, որ վիճարկվող դրույթում առկա օրենսդրական բացով պայմանավորված՝ դրան տրված մեկնաբանությունը հակասում է Սահմանադրության 10-րդ և 60-րդ հոդվածներին, քանի որ բացի հանձնման-ընդունման երկկողմանի ստորագրված ակտի ներկայացումից կապալառուները որևէ այլ եղանակով չեն կարող հիմնավորել աշխատանքի արդյունքը պատվիրատուին փաստացի հանձնված լինելու հանգամանքը, ինչի արդյունքում առաջինները զրկվում են իրենց սեփականությունից:

Դիմողը նշում է, որ վիճարկվող դրույթում առկա բացը հանգեցրել է դրան տրված այնպիսի մեկնաբանության, որի համաձայն՝ աշխատանքի արդյունքը ընդունելու հանգամանքը կարող է ապացուցվել միայն երկու կողմերի ստորա-

գրած ակտով, որի բացակայության դեպքում պատվիրատուն չի կրում պայմանագրի գինը վճարելու պարտականություն:

Ըստ Դիմողի՝ առկա է իրավակարգավորման թերություն, այլ ոչ թե իրավաստեղծ մարմնի կամքը՝ ձեռնպահ մնալու որպես օրենսդրական բաց ընկալվող իրավական կարգավորումից. հակառակ դեպքում Քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր դրույթներում չէր սահմանվի, որ գույքը ձեռք բերողին հանձնված է համարվում այն վերջինիս կամ նրա նշած անձի փաստացի տիրապետմանն անցնելու պահից: Խոսքը իրավակարգավորման թերության մասին է, քանի որ ներկայացվող բացը հանգեցնում է քաղաքացիական հարաբերությունների մասնակիցների հավասարության սկզբունքի խախտմանը:

Դիմողի համոզմամբ՝ օրենսդրական բացը հնարավոր չէ հաղթահարել այլ վերաբերելի իրավակարգավորումները մեկնաբանելու կամ կիրառելու միջոցով, քանի որ դրա արդյունքում հնարավոր չէ բացահայտել այն չափանիշները և պահանջները, որոնք հիմք կտան հասկանալու, թե ինչպես է հնարավոր պատշաճ կերպով կատարված աշխատանքի դիմաց կապալառուին չվճարել միայն այն պատճառով, որ աշխատանքի արդյունքը հանձնվել է առանց երկկողմանի ստորագրված հանձնման-ընդունման ակտի, իսկ վիճարկվող նորմով աշխատանքի արդյունքը փաստացի պատվիրատուի տիրապետմանը հանձնելը չի համարվում աշխատանքի արդյունքի հանձնում:

**3.** Ուսումնասիրելով սույն անհատական դիմումը և դրան կից ներկայացված դատական ակտերն ու մյուս փաստաթղթերը, ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 6-րդ մասով, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջները՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

Քաղաքացիական օրենսգրքի 751-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է. «Կապալառուի կողմից աշխատանքի արդյունքի հանձնումը և պատվիրատուի կողմից դրա ընդունումը ձևակերպվում է երկու կողմերի ստորագրած ակտով: Ակտն ստորագրելուց կողմերից մեկի հրաժարվելու դեպքում ակտում նշվում է այդ մասին, և ակտն ստորագրում է մյուս կողմը:

Աշխատանքի արդյունքը հանձնելու կամ ընդունելու միակողմանի ակտը դատարանը կարող է անվավեր ճանաչել, եթե հիմնավոր են ճանաչվել ակտն ստորագրելուց հրաժարվելու շարժառիթները»:

Դիմողն առաջադրում է Քաղաքացիական օրենսգրքի 751-րդ հոդվածի 4-րդ մասում առկա ենթադրյալ օրենսդրական բացի սահմանադրականության հարց՝ նշելով, որ հիշյալ դրույթը չի նախատեսում կարգավորում առ այն, որ

կապալառուի կողմից աշխատանքի արդյունքը պատվիրատուին հանձնված է համարվում նաև այն վերջինիս փաստացի տիրապետմանը հանձնելու պահից: Ըստ Դիմողի՝ նշվածը հանգեցնում է հանձնման-ընդունման ակտից բացի աշխատանքի արդյունքը պատվիրատուին հանձնելու մասին որևէ այլ ապացույցով պահանջը հիմնավորելու և կապալառուի՝ պատվիրատուից համապատասխան վարձատրություն ստանալու պահանջն իրացնելու անհնարինությանը՝ խախտելով կապալառուի՝ Սահմանադրության 59, 60 և 63-րդ հոդվածներով նախատեսված իրավունքները:

Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ Քաղաքացիական օրենսգրքի 751-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է շինարարական կապալի պայմանագրով կատարված աշխատանքի արդյունքը կապալառուի կողմից հանձնելը և պատվիրատուի կողմից ընդունելը ձևակերպելու եղանակը, այն է՝ կազմվում է հանձնման-ընդունման ակտ՝ երկու կողմի ստորագրությամբ, իսկ եթե կողմերից մեկը հրաժարվում է այն ստորագրել, ապա ակտում նշվում է այդ մասին, և այն ստորագրում է մի կողմը: Օրենսդրական նման պահանջի սահմանումը նշանակում է, որ շինարարական կապալի պայմանագրով կատարված աշխատանքի արդյունքը հանձնելու և այն ընդունելու գործընթացի տարր է նաև հանձնման-ընդունման ակտի կնքումը:

Միաժամանակ, պայմանագրի բարեխիղճ կողմի շահերի պաշտպանությունը երաշխավորելու նպատակով հիշյալ դրույթը հանձնման-ընդունման միակողմ ակտն ապահովում է նույն իրավաբանական ուժով և դրա կայացման հետ կապում է միևնույն իրավական հետևանքները, ինչ երկու կողմերի ստորագրած ակտի պարագայում է. բացառություն է կազմում այն դեպքը, երբ հետագայում միակողմ ակտը դատարանի կողմից ճանաչվում է անվավեր՝ պայմանավորված մյուս կողմի՝ ակտը ստորագրելուց հրաժարվելու շարժառիթները հիմնավոր ճանաչվելու հանգամանքով:

Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ քաղաքացիական շրջանառության մասնակիցների միջև ծագող պայմանագրային

պարտավորությունների իրավական կարգավորումը՝ դրանց շրջանակներում որոշակի հանգամանքների ապացուցմանը վերաբերող պայմանների սահմանումը վերապահված է օրենսդրի իրավասությանը: Այդ առումով Քաղաքացիական օրենսգրքի 751-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես հատուկ կարգավորում, սահմանում է շինարարական կապալի պայմանագրով կատարված աշխատանքի արդյունքը կապալառուի կողմից հանձնելը և պատվիրատուի կողմից ընդունելը հանձման-ընդունման ակտով ձևակերպելու հրամայական պահանջ՝ չնախատեսելով այդ կանոնից որևէ բացառություն:

Դիմողը հայտնում է, որ իր գործով կապալառուն հանձնել է, իսկ պատվիրատուն ընդունել է շինարարական կապալի պայմանագրով կատարված աշխատանքի արդյունքը, բայց հանձնման-ընդունման ակտ չի կազմվել: Մինչդեռ դիմումը չի պարունակում որևէ հիմնավորում առ այն, թե ի՞նչն է եղել հանձման-ընդունման ակտ չկազմելու պատճառը, ինչպես նաև տեղեկություն այն մասին, թե որքանով և ի՞նչ պատճառաբանությամբ է կապալառուի համար անհասանելի եղել օրենսդրի կողմից նախատեսված՝ միայն կապալառուի ստորագրությամբ միակողմ հանձնման-ընդունման ակտի կազմման հնարավորությունը, որի բացակայությունը կխոչընդոտեր կապալառուի՝ Սահմանադրության 2-րդ հոդվածով նախատեսված իրավունքների կամ ազատությունների արդյունավետ իրականացմանը: Այլ խոսքով՝ դիմումում բացակայում է հիմնավորում առ այն, թե որքանով է Դիմողի կողմից վիճարկվող իրավական նորմերի ենթադրյալ հակասահմանադրականությունը հանգեցրել իր որևէ սահմանադրական իրավունքի կամ ազատության խախտման: Հետևաբար՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և նույն հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի



29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 69-րդ հոդվածի 5 և 6-րդ մասերի պահանջները՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Հայկ Արշին» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝



Վ. Գրիգորյան

Ա. Թունյան

Ե. Խունդկարյան

27 փետրվարի 2023 թվականի

ՍԴԴԿՈ-8